

ԿԱՐԻՆԵ ԱՂԱԲԵԿՅԱՆ

ԿՆՈՋ ՄԵՆԱՄԱՐՏԸ



Գ Ի Տ Ա Ն Ք

Երևան 2003

Կարինե Աղաբեկյանը ճանաչված երաժիշտ է և արձակագիր: Նրա գրչին են պատկանում նաև «Սիրո հասունացումը», «Սիրո վերադարձը», «Սիրո կանչը», «Զգացմունքների ներդաշնակություն», «Սեր և արժանապատվություն», «Կգան բազում արշալույսներ», «Սիրո ուսուցիչը», «Սիրո ծուղակ» և «Շանթի սանձահարումը» վիպակները, որոնք նշանավորեցին հայ առաջին սիրավեպի սկզբնավորումը և մեծ հետաքրքրություն առաջացրին ընթերցողների շրջանում:

Աղաբեկյան, Կ

Կնոջ մենամարտը: Սիրավեպ / Կարինե Աղաբեկյան: - Եր.: 2009
Գիտանք, - 96 էջ.

Թվում է թե ամեն ինչ բարեհաջող է Մանեի կյանքում. նա ունի սիրող ամուսին ու հրաշալի որդի, սակայն մի օր նա հայտնաբերում է, որ Արան դավաճանում է իրեն: Իր մեջ ճնշելով խոր վիրավորանքի զգացումը և ամուսնուց անհապաղ բացատրություններ պահանջելու ցանկությունը՝ Մանեն փորձում է հասկանալ նրա անհավատարմության պատճառը: Միգուցե ինքը ևս մեղավոր է... Եվ նա որոշում է ամեն կերպ պայքարել, միայն թե վերադարձնի Արայի սերը: Արդյո՞ք դա կհաջողվի Մանեին...

ISBN 99930-806-3-9

© Կարինե Աղաբեկյան, 1999, 2009

Նկարը՝ Ռոման Մարգարյանի

Կազմի ձևավորումը՝ Ա. Աղաբեկյանի և Լ. Մուրադյանի

Այս գրքի բոլոր հերոսներն ու իրադարձությունները հորինված են, ամեն համընկնումը՝ պատահականություն:

*Ամուսնությունը միշտ պետք է պայքարի
այն հրեշի դեմ, որի անունն է Սովորություն:*

Օնորե դը Բալզակ

1

Ջանալով հնարավորին չափ քիչ աղմկել՝ Արան դուռը կամացուկ փակեց, արդեն սովորական զգուշությամբ հանեց կոշիկները, հագավ տնային մաշիկները, ապա ոտքի մատների վրա ուղղվեց դեպի հյուրասենյակ, որտեղ, չգիտես ինչու, այս կեսգիշերին լույս էր վառվում: Ձեռքը մեկնեց անջատիչին՝ լույսը մարելու, սակայն շփոթված կանգ առավ. հյուրասենյակում մտերմիկ ընթրիքի գեղեցիկ սեղան էր սպասքավորված: Յոգատար տանտիրուհին ոչինչ չէր մոռացել՝ սկսած ձյունափայլ ճերմակության ճռթռթռ սփռոցից և վերջացրած մոմակալների մեջ դրված ոլորուն կարմիր մոմերով:

Սակայն ափսեներին գեղարվեստորեն դասավորված խոզապուխտի ու պանրի շերտիկները վաղուց չորացել էին, լլիկով ու վարունգով աղցանը խղճուկ տեսք ուներ, իսկ մետաղյա տակառիկի մեջ, որտեղ սառույցը վաղուց հալել էր, միայնակ տխրում էր ավանդական շամպայնի շիշը:

Տղամարդը խուճապահար կնճռոտեց ճակատն ու փորձեց կռահել հանդիսավոր ընթրիքի առիթը: *Կարծես թե ոչ մեկի ծննդյան օրը չէ*, մտածեց տագնապով: *Այդ ի՞նչ էր ուզում տոնել Մանեն և ինչո՞ւ ինձ նախօրոք բան չէր ասել:* Նա լույսը

հանգցրեց և ցանկանալով համբուրել որդուն՝ բացեց Արամիկի սենյակի դուռը, ապա զարմացած կանգ առավ. երեխան իր անկողնում չէր:

Արան մտամուլոր գնաց խոհանոց: Այնտեղ սեղանին սառած յուղի շերտով պատված, համեմունքներով ու սխտորով տապակած, ինչպես միայն Մանեն կարող էր պատրաստել, խոզի ազդրամիսն էր և իր սիրած «Սենատոր» տորթը, որի մեջ խրված ութ մոմերը վերջապես հուշեցին, թե ինքն ի՞նչ կարևոր տարեթիվ է մոռացել...

Սառը քրտինքը պատեց տղամարդուն, և նա մեղավոր քայլերով ուղղվեց դեպի ննջարան՝ պատրաստվելով դժվարին բացատրությանը: Դուռն անաղմուկ բաց արեց, մտավ մութ սենյակ ու թեթևացած շունչ քաշեց. Մանեն քնած էր:

Արան հանվեց, բարձրացրեց վերմակի ծայրն ու զգուշաբար սողոսկեց տակը: Ծանրությունից ներքնակը կորացավ, և նա վախեցած հայացք նետեց լայնարձակ մահճակալի մյուս կողմում պառկած կնոջը, բայց Մանեն բարեբախտաբար չարթնացավ:

Տղամարդու բավարարված մարմինը հանգիստ էր պահանջում, սակայն տազնապահար մտքերը չէին թողնում քնել՝ հարկադրելով մտածել այնպիսի բաների մասին, որոնք զուր էր փորձում վանել: Այդ մտքերը հոգեմաշ էին անում՝ մշտապես թունավորելով այն արգելված հաճույքները, որ նա թմրամուլի անհագությանը գաղտագողի վայելում էր վերջին մի քանի ամսվա ընթացքում:

Ո՞նց հասա այս օրվան, մոռացա մեր ամուսնության տարեդարձի մասին, մտմտում էր սրտնեղությանը: Ի՞նչ պատահեց մեր սիրուն: Ինչո՞ւ...

Եվ ինչպես միշտ, գտնվեցին սեփական մեղքերն արդարացնող տարբեր փաստարկներ: Իհարկե, ինքը շարունակում էր սիրել Մանեին՝ նրա մարդկային ու կանացի բարձր արժանիքների համար: Նա միշտ էլ կնոջ հետ իրեն շատ լավ ու հանգստավետ էր զգում: Մանեն փափուկ ու թեթև բնավորություն ուներ, բարի էր ու կարեկից: Ինչ էլ պատահեր, երբեք ամուսնուն չէր հանդիմանում՝ ընթրումով ընդունելով կյանքի ամեն մի դժվարություն: Իսկական ընկերոջ պես, առանց որևէ տրտունջի, Արայի հետ ուս-ուսի անցկացրեց այն ծանր, սոված, մութ ու ցուրտ մղձավանջային տարիները, և հիմա երբ իրենք վերջապես դուրս եկան փակուղուց և պետք է որ վայելեին բոլոր փորձություններից հիմակայած իրենց սերը, Մանեն ամուսնու մեջ ցանկություն չէր հարուցում. անձև տնազգեստով քողարկված գիրուկ մարմինը նրան այլևս չէր ձգում: Ի՞նչ պատահեց այն գեղիրան, փարթամ վարսերով, վառվռուն աղջկան...

Արան արդեն մոռացել էր, թե վերջին անգամ երբ է կնոջը տեսել արձակված վարսերով. առաջվա շքեղ մազերը մշտապես հավաքված անփույթ փնջի մեջ (այսպես ավելի հարմար է), առանց շպարի, նա իր քսանինը տարեկանից ավելի տարիքով էր երևում: Անշուշտ, փոքր երեխան, տան հոգսերը նույնպես մեղավոր էին, և Արան դա չէր ժխտում, բայց իր կնոջ չքնաղ խաժ աչքերն անգամ կորցրել էին իրենց ջերմ փայլը:

Արան կասկածում էր, որ Մանեի հայացքը նրա մեղքով է մարել: Հարկավ նա հիմար չէ, միգուցե և սկսել է կռահել, որ առողջ տղամարդը չի կարող երեք ամիս շարունակ «հոգնածության ու զբաղվածության» պատրվակով չդիպչել իր կնոջը, իսկ հաճախակի կրկնվող կեսգիշերային վերադարձերը տուն պատճառաբանել անվերջանալի գործնական ընթրիքներով:

Ամենասարսափելին այն էր, որ վաղ թե ուշ իր խայտառակ գաղտնիքը կարող էր բացահայտվել, իսկ ինքը՝ հայտնվեր անելանելի վիճակում: Արան գիտեր, որ երբեք չի ցանկանա բաժանվել կնոջից (մի՞թե կգտնվի նրանից ավելի լավ կին ու մայր), թեև համոզված էր՝ եթե Մանեն իմանա իր անհավատարմության մասին, ապա դա չի հանդուրժի, իրեն չի ների և անմիջապես կդիմի վճռական քայլերի: Թեև նա հստակությամբ ըմբռնում էր իրավիճակի վտանգավորությունը, բայց այդուհանդերձ չէր կարողանում որևէ բան փոխել: Դիմադրում էր իր մեջ արթնացող խղճի վեհերոտ ձայնին, քանի որ առայժմ գերադասում էր թե՛ վայելել իր գաղտնի հաճույքները և թե՛, միաժամանակ, չկորցնել Մանեին:

Չիմա ի՞նչ անեն: Այո՛, այս արարքը կարող էր հանգեցնել շատ վատ հետևանքների. իրեն ոչ մի արդարացում չկա: Այժմ տղամարդն ամենաթունդ խոսքերով նախատում էր իրեն, երբ պատկերացնում էր իրեն սպասող ստիճ խոսակցությունն ու Մանեի դառը կշտամբանքները. «Ո՞նց կարող էիր մոռանալ մեր ամենամվիրական օրը»:

Նա ականա հիշեց, թե ինչպես իրենց կյանքի ամենադժվար ժամանակ Մանեն, մի տարեկան Արամիկին նախապես տանելով իր ծնողների տուն, նավթավառի վրա խաչապուրի էր պատրաստել, և իրենց տոնական սեղանին լոկ այդ խաչապուրին էր ու վառվող մոմերը, քանի որ էլեկտրական լույս ընդհանրապես չկար: Ինչպիսի բերկրանքով ընդունեց իր բերած խղճուկ ծաղկեփունջը, ինչպե՛ս էր փաթաթվել ու անվերջ համբուրում... Այնուհետև ի՞նչ ամնոռանալի գիշեր անցկացրին՝ սիրով զբաղվելով մինչև առավոտ: Դրանից հետո միմյանց խոստացան, որ այսուհետ սոսկ այդ ձևով կնշեն իրենց ամենանշանակալի օրը:

Արան խոր հոգոց արձակեց. ավա՞ղ, լավ էր հիշում, թե ինչպես ինքը, Մանեին գրկում սեղմելով, կատակով հայտարարեց. «Արամիկին էլ հատուկ կքնեցնենք քո ծնողների տանը, որպեսզի մեր օրը միշտ նշենք այս անգամվա նման»: Եվ հետևյալ բոլոր տարեդարձերը տոնելիս հավատարիմ մնացին իրենց խոստմանը: Թեև նրանց սեղանը հետզհետե ավելի ճոխացավ, իսկ համեստ ծաղկեփունջը փոխարինվեց լավ օժանելիքով կամ մի այլ նվերով, իրենց հիշողության մեջ առմիշտ դրոշմվել էր երրորդ տարեդարձը՝ որպես բոլոր դժվարություններին դիմակայած ու հաղթանակած իրենց անհատնում սիրո խորհրդանիշ: Եվ այսօր էլ, ըստ ավանդույթի, վեցամյա Արամիկը գիշերում էր Մանեի ծնողների տանը:

Այժմ Արան սրտմտում էր՝ պատկերացնելով իր կնոջ հիասթափությունը, նրա ապրումները, երբ ամուսնու ամենասիրած ճաշատեսակները պատրաստելուց հետո տոնական սեղան էր գցել, անհամբերությամբ սպասել նրան, ակնկալել սիրո ավանդական գիշերը, այնինչ ինքը...

Նա քաջ գիտակցում էր՝ ինչ ցավ է պատճառել կնոջը, սակայն արդյո՞ք ի վիճակի էր հրաժարվել Լուիզայի նրբակերտ ու ճկուն մարմնից: Հապա այն վայելքների՞ց, որ փոխադարձաբար մատուցում էին միմյանց, և որոնց կարիքը թմրադեղի նման հետզհետե ավելի ու ավելի էր զգում... Որքան էլ փափագեր, այդ վայելքները երբևէ չէր համարձակվի առաջարկել կնոջը՝ երկյուղելով, թե նա վրդովմունքով կհրաժարվի...

...Մանեն մտամոլոր մտավ լոգասենյակ և բացեց ծորակները:
Ի՞նչ անեն, մտածում էր խուճապահար: Ո՞նց խափանեն նրանց տեսակցությունը: Ի՞նչ անեն, որպեսզի Արան մոռանա այդ անառակին...

Ընկղմվելով անուշաբույր փրփուրով լեցուն լոգարանը՝ Մանեն շարունակում էր մտորել և կարծես թե ելքը գտավ: Այո՛, այժմ պետք է վերջնականապես լուծվի այս բախտորոշ հարցը. ո՞վ կհաղթի՝ սիրուհի՞ն, թե՞ կինը... Նա պետք է խիզախի ու դեն նետի իրեն կաշկանդող բոլոր կապանքները և իր փաղաքշանքներով այնպես նսեմացնի այդ փորձառու շիկահերին, որ Արան առմիշտ մոռանա նրան: Ի վերջո, մի՞թե ինքն այդ ուրիշի ամուսին հափշտակողի չափ էլ չկա...

Ո՛ւհ, Արա՛, այնքան ես խելքդ կորցրել, որ զագրելի ստեր ես մոգոնում, միայն թե վերջին օրն էլ կարողանաս տնից ծլկել: Յուրահատուկ վայելքնե՞ր ես գերադասում, հա՞... Ինձ այլևս ոչինչ չի պահում, հենց հիմա լրի՛վ ծրագրով կստանաս, վրիժառությանը վճռեց Մանեն: Դե, սպասի՛ր, ստոր դավաճան, տես՛, ոնց հախիցդ կգամ:

Նա դուրս եկավ լոգասենյակից և իրեն սիրտ տալով գնաց ննջարան: Մինչ Արան ցնցուղ էր ընդունում, Մանեն իրեն հանգամանորեն կարգի բերեց՝ չմոռանալով նաև օժանելիքի մասին, և սառը գլխով, բայց այրվող հոգով սպասում էր ամուսնուն՝ ներքուստ պատրաստվելով գայթակղման տեսարանին:

- Դեռ չես քնե՞լ, - ննջարան մտնելով՝ զարմացավ Արան, որը ջանացել էր հնարավորինս ձգձգել իր գիշերային հարդարանքը, - արդեն ուշ է:

Նրա մազերը դեռ խոնավ էին, իսկ սլացիկ մարմնի մերկությունը քողարկվում էր սոսկ գոտկատեղին փաթաթված սրբիչով: Իրենից անկախ՝ Մանեն չէր կարողանում հմայված հայացքը հեռացնել մկանուտ կուրծքը պատած սև գանգուր մազերից, որոնք սեպածն իջնելով՝ անհետանում էին սրբիչի տակ: Մի պահ մոռացավ, թե քիչ առաջ ինքն ինչ էր որոշել.

շունչը պահած, չորացած շուրթերն անգիտակցաբար լպստելով՝ նայում էր նրան ու չէր հագնում:

- Չ-չեմ ուզում քնել, - արտաբերեց բեկբեկուն ձայնով, - քեզ էի սպասում:

Իրեն տիրապետելով՝ Մանեն վերմակն անփութորեն մի կողմ նետեց, նազանքով վեր կացավ և, սադափանման մերկությամբ հպարտ փայլելով, գիշատչի գողունի քայլերով մոտեցավ տղամարդուն:

Նա վստահ շարժումով արձակեց ցանքոցը, որ խանգարում էր իրեն, ու բաղձանքով հավեց անուսնուն՝ հաճույքով շնչելով նրա օժանելիքախառն, տոփպ բույրը, բայց Արան, խուսափելով, ընկրկեց.

- Կներես, ես... ես հոգնած եմ, - կմկմաց նա:

Իսկ Մանեն վերջապես կարողացել էր ազատվել ներքին կապանքներից և ոչինչ լսել չէր ուզում. վերածնված կնոջ մերթ քնքուշ, մերթ տարփոտ փաղաքշանքները հաշվարկված ճշգրտությամբ, առատ անձրևի նման տեղում էին շշկված ամուսնու վրա՝ առանց գգվանքի չթողնելով նրա մարմնի ոչ մի մասը: Սակայն իր բոլոր գգվանքները սառնասրտորեն ծրագրած կինն ընկավ սեփական թակարդը. նա զգում էր, թե ինչպես է ատելությունը մարելով՝ վերածվում կրքի, մոլեգին ցանկությունը բանականությունը մթագնելով՝ պաշարում իրեն, և ամեն բան մոռացնելով՝ դառնում տանջալի...

- Ուզում եմ քեզ, - կրքոտ շշուկով պահանջեց Մանեն, - եթե հրաժարվես, պատրաստ եմ սպանելու...

Նրա անհագ բերանն անսովոր համարձակությամբ համտեսելով, կծոտելով՝ վար սահեց և վերջապես խիզախեց այն փաղաքշանքին, որ երբևէ չէր թույլատրել իրեն: Արան դողաց, գլուխը հետ ընկավ, մկանները ձգվեցին...

Պարզվում է, դա շատ հեշտ է, մտածեց Մանեն՝ ըմբռնվելով ամուսնու արձագանքը, բայց դա նրա վերջին հստակ միտքն էր: Կնոջն արբեցնում էր իշխելու այդ նոր, անծանոթ զգացումը, որն ավելի գրգռելով՝ ստիպում էր առավել ճարտարություն գործադրել, միայն թե ինքն անվերջ զգար, թե տղամարդու զորեղ մարմինն ինչպես է ցնցվում իր շուրթերի նուրբ հպանքից: Նրա արձագանքն ամենաուժեղ թմրադեղի նման խենթացնում էր Մանեին...

- Մանե՛... ի՛նչ ես անում...

- Սիրում եմ, - մրմնջաց շնչահև ու կամացուկ ծիծաղեց, - տեսա՞ր, բոլորովին էլ հոգնած չես:

Կնոջ հրաշագործ շուրթերը վերսկսեցին թեժ, մկանուտ մարմնի հետազոտությունը, քանզի բնազդը՝ նույնքան հինավուրց, որքան Եվան՝ ինքը, նրան օգնում էր գտնել ամենազգայուն կետերը: Կրքից դողալով՝ Արան ինքնամոռաց արձագանքում էր իր կնոջ նվիրած վայելքի ամեն մի պահին: Տղամարդու ձեռքերը, որ ընկղմված էին նրա մետաքսանման վարսերի մեջ, տենդահար ցած սահեցին, բարձրացրին տրոփող մարմինն ու արագ շարժումով իջեցնելով մահճակալին՝ սկսեցին իրենց մոգական ճանապարհորդությունը...

Մանեն արդեն մոռացել էր վրիժառության մասին. անհագուրդ ցանկությունից դրդված՝ անհամբերությամբ դեպի իրեն քաշեց ամուսնու մարմինը, երանությամբ ճաշակելով այդքան ծանոթ, այդքան հարազատ ծանրությունը: Նա գալարվում էր, նվաղում այդ քաղցր ճնշման տակ:

Արայի լեզուն՝ պահանջկոտ, աղերսող, մխրճվեց կնոջ բերանի անուշ խորքերը, նրանց լեզուները միահյուսվեցին անսահման կրքի պոռթկումով: Իր երկար ոտքերով փաթաթվելով տղամարդու իրանին՝ Մանեն ծաղկի պես բացվեց ընդառաջ...

- Մանե՛...

Եվ սկսվեց ամենահուզիչ խաղը, որտեղ կինն ինքն էր մե-
նակատարը՝ նվագակցողի դերը թողնելով տղամարդուն: Նա
փայլուն կատարեց անսովոր մենանվագը: Եվ աննկարագրելի
հուզիչ էր նայել ամուսնու դեմքին ու տեսնել, որ նրան դուր է
գալիս այն, ինչ ինքն անում է:

Տեսնել հավանության կայծը նրա արծաթափայլ հայաց-
քում, ապա ինքնատիրապետման կորուստը, գերագույն վա-
յելքի ջղակծկումը, և գիտակցել, որ այդ վայելքը *հնքն* է ընծա-
յում նրան...

Իսկ գլխում միևնույն միտքն էր անընդհատ հնչում՝ ի՛ն՝ ա-
մուսինը, ի՛ն՝ տղամարդը, ի՛ն՝ սիրեկանը, ի՛ն՝ը...